



Սիւսանթո

ԿՈՎԿԱՍ

Նուէր կովկասահայ ընկերներու

Ի՛նչ ոսկեղէն դարագլուխ է այս, եւ շղթաներու ի՛նչ գայրագին փշրտում.
Ի՛նչ ընդհարում ճակատ ճակատի, եւ հաւատքի ի՛նչ յաղթանակ.
Ի՛նչ երկաթակոտ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն.
Ի՛նչ արիւնի հեղեղում քեզ անարժան թշնամիդ վայրագ շարքերէն,
Եւ դիակի ու բացուած լանջքերու ի՛նչ արդարաշար մեռելակոյտ,
Մեր բոլորին վրիժաժարաւ աշուրներուն առջեւ...

Կովկա՛ս, յաղթականօրէն դուն եղար, որ յայտնութիւններուն գերագոյնը ըրիր.
Քու բազուկներուդ հուրին մէջն էր գետնահարող զօրութիւնը Յեղին,
Քու մտածումիդ մէջն էր որ ծնաւ կարմիր արեւը յուսահատեալ Յաղթութեան,
Քու արիւնիդ մէջն էր որ վառեցաւ ճշմարիտ արիւնը երագուած Ընդվզումին.

Եւ այսպէս իրիկուն մը քու գինավառ ձեռքերդ ազատութեան աստղերուն
նիզակուեցան,
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներէն կորզելու
Քիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր եւ քիչ մը երագ՝
Քու խռովեալ սերունդիդ եւ ի քեզ ակնդէտ ու տառապող եղբայրներուդ համար:

Օ՛, փառք քեզի, եւ փառք շանթամարտ հպարտութեանը քու լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն յաւիտենական տարրերէն են կառուցուած՝

Անպարտելի հասակները քու սեւահեր ու հրաշուի որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական...
Անոնց զինուորեալի կուրծքերուն մէջ իր հսկայական հեւքը դրաւ.
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջեւ Յոյսին ճամբաներուն պէս
կանանչացան...
Եւ քու հողմերդ Անոնց շունչին մէջէն փրկութեան Ժամը շեփորեցին:
Քու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է,
Եւ հարագատ եւ անպարտելի եւ անվեհեր զանգուածը մեր հինաւորց Ազգին,
Մեր նսեմացեալ ճակատները այդտեղ է որ վերջապէս իրենց մութէն
պայծառացան,
Այդտե՛ղ էր, որ սկսաւ պայքարի սուրերուն ամենէն արդարը շողալ,
Այդտե՛ղ էր, որ Ժողովուրդը իր իրաւունքը իր կռուիովը պահանջեց,
Այդտե՛ղ էր, որ կատաղութեամբ զարկաւ եւ հպարտօրէն զարնուեցաւ,
Այդտե՛ղ էր, որ արդարութի՛ւն որոտացողի իր ճակատը փառակերտ ՝
Արեւմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պէս ցոլացուց,
Այդտե՛ղ էր, որ իր անէծքի եւ պժգանքի թուքը թագակրին նետեց,
Եւ այդտե՛ղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր մը ամօթահար պարտուեցաւ,
Եւ քեզի համար, այդտե՛ղ է որ այսուիտեւ կոթողները Փառքին,
Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պիտի բարձրանան...

Զա՛րկ, Կովկա՛ս, աւերակեալ ու արցունքոտ
Հայաստանին աչքերը քեզի կը նային.
Ան գիտէ, որ քու թշնամիիդ ատելութիւնը իր
թշնամիներէն է որ կը բղխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ
եկաւ ճամբաներդ սգաւորել,
Երբ իր արիւնը եկաւ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտորտած բազուկը քու կտրիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի դողդոջեցաւ,
Թշնամին նոյնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկէն
զարհուրած՝
Կ'ուզէ զայն ջախջախել, կարենալ տօնելու համար վերջնական մահացումը մեր
Յեղին...
Ուրեմն զա՛րկ, Կովկա՛ս, թէեւ գիտեմ որ քու ասպետական ձեռքերուդ

հարուածին անարժան է նա՛,
Զա՛րկ, թէ՛ն գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը պէտք չէ՛ր արատաւորել
Այդ անբաններու խուժանին թունաւոր ու պժգալից արիւնէն...
Զա՛րկ, թէ՛ն գիտեմ որ հերոսները հերոսներու միայն կրնան ընդհարուիլ,
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը ջախջախելու եւ
Չարիքն ըմբերանելու համար,
Զա՛րկ, որովհետեւ ամէ՛ն Յոյս գ-Քեզ կը յուսայ եւ ամէն
Ապագայ գ-Քեզ կը պաղատի,
Զա՛րկ, վասնզի ամէն Ազատութիւն ու ամէն Արեւ քու հարուածիդ կայծերէն
պիտի ծնանին.
Զա՛րկ, քու անթառամ սիրոյդ եւ ատելութեանդ չափին խորութեանը համեմատ.
Զա՛րկ, գա՛րկ, ահաւասիկ հորիզոնները կը կապուտնան, ահաւասիկ
Առաւօտները կը ճեղքուին,
Զա՛րկ, ազատաբեր հարուածիդ շոինդը Մասիսէն ի Տաւրոս եւ մինչեւ
Հայրենիքին խորերը կը թնդայ: